ԱՎԱԳ ՇԱԲԱԹԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ամեն տարի յուրաքանչյուր հայ հավատացյալ հավատքի զորացման, ինքնախոկումի ու ինքնապաշխարման յոթ շաբաթներ է ապրում՝ պատրաստվելով քրիստոնեական մեծագույն տոնին՝ Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարությանը:

Մեծ պահքի այս յոթ շաբաթների կիզակետն է Ավագ Շաբաթը, որն ամբողջությամբ շնչում է Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի վերջին օրերի խորհրդով. Քրիստոսի ուսուցումները, չարչարանքները, խաչելությունը և Հրաշափառ Հարությունը:

Ավագ Շաբաթվա սկիզբն ազդարարում է Ծաղկազարդի կիրակին՝ խորհրդանշելով Հիսուս Քրիստոսի մուտքը Երուսաղեմ:

Այս օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ հռչակված է որպես Մանուկների օրհնության օր:

Ծաղկազարդի կիրակի, ապրիլի 4-ին, առավոտյան ժամերգության ընթացքում, Մայր Տաճարի արևմտյան բակում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Անդաստանի արարողություն, հընթացս որի Նորին Սրբությունն իր օրհնությունը տվեց մանուկներին. «Ինչպես ժողովուրդն ընդառաջ ելավ ու ողջունեց Հիսուսին կանաչ ճյուղերով, նույնպես այսօր դուք ձեր ծնողների ու հարազատների հետ ծաղկած ճյուղեր առած, զվարթ հոգով և աղոթքը ձեր շուրթերին գնում եք եկեղեցիներ՝ ստանալու օրհնությունը Քրիստոսի՝ մեր Փրկչի ու Տիրոջ» (տե՛ս էջ 25):

Ավագ Երկուշաբթին խորհրդանշում է Արարչագործությունը, հիշատակվում է նաև Անպտուղ թզենու առակն ու Երուսաղեմի Տաճարի մաքրագործումը: Մայր Տաճարում առավոտյան և երեկոյան ժամերգությունների ընթացքում Ս. Գրային ընթերցումները հիշատակում էին Հիսուս Քրիստոսի այս ուսուցումները՝ անպտուղ կյանքով չապրելու պատգամով:

Ավագ Երեքշաբթի հիշատակվում է Տասը կույսերի առակը՝ համաձայն Ավետարանական պատգամի, թե՝ *«Արթո՛ւն կացեք, որովհետև չգիտեք ո՛չ օրը և ո՛չ էլ ժամը»* (Մատթ. ԻԵ 13):

Ընդունված կարգով Ավագ Երեքշաբթի, երեկոյան ժամերգության ընթացքում, Մայր Տաճարի ատյան դուրս եկան տասը մանուկներ՝ խորհրդանշելով տասը կույսերին: Ձեռքերին ունենալով մոմեր՝ հինգը վառվող, հինգը՝ հանգած, մանուկները խորհրդանշում են հինգ իմաստուն և հինգ հիմար կույսերին:

Ավագ Չորեքշաբթի հիշատակվում է Բեթանիայում մեղավոր կնոջ կողմից թանկագին յուղով Հիսուսի օծման պատմությունը՝ որպես խորհրդանիշ Քրիստոսի խաչելության ու մոտալուտ մահվան: Այս օրը խորհրդանշում է նաև Հիսուսի մատնությունը:

Այս տարի, սակայն, Ավագ Չորեքշաբթին համընկավ ապրիլի 7-ի Ավետման տոնին, երբ հնչում է Գաբրիել հրեշտակապետի կողմից Սուրբ Աստվածածնին տրված Ավետիսը.

ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹԻ ԹԱՂՄԱՆ ԿԱՐԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Академия наук Арм... ССР
Фундаментальная библиотека

«ԵՒ ՋՈՒՐ ԱՌԵԱԼ ԾԱՌԱՅԱԲԱՐ ԶՈՏՍ ԼՈՒԱՆԱՅՐ ԶԱՇԱԿԵՐՏԱՑՆ»

«Սուրբ Հոգին կգա քո վրա, և Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ, որովհետև Նա, Ով քեզնից է ծնվելու, սուրբ է և Աստծու Որդի կկոչվի» (Ղուկ. Ա 35):

Ապրիլի 7-ին Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Տ. Թադեոս վրդ. Ջիրեկյանցը:

Արդեն մի քանի տարի է, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Ավետման տոնը հռչակվել է Մայրության օրհնության օր: Այս կապակցությամբ այդ օրը Հայաստանի բոլոր եկեղեցիներում կատարվեց նաև մայրության օրհնության կարգ:

Ավագ Հինգշաբթին խորհրդանշում է վերջին ընթրիքը՝ որպես Ս. Հաղորդության խորհրդի հաստատում, և Ոտնլվան՝ որպես սիրո և խոնարհաբար ծառայելու Տերունավանդ օրինակ:

Առավոտյան Մայրավանքում, որպես հիշատակություն Հաղորդության խորհրդի հաստատման, մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Տ. Կյուրեղ աբեղա Վարդանյանը:

Նույն օրը, ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Ոտնլվայի կարգը: Վեհափառ Հայրապետը խաչով ու Ավետարանով օրհնեց խորանում դրված ջուրը և յուղը: Ապա «Պահպանիչ» աղոթքից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հիսուս Քրիստոսի օրինակով՝ ծունկի գալով լվաց և օծեց տասներկու հոգևորականների և աշխարհականների ոտքերը: Արարողությունից հետո հավատացյալներին բաժանվեց օրհնված յուղը, որը հավատացյալները գործածում են հիվանդությունների դեպքում կամ խառնում տանն ունեցած յուղին:

Երեկոյան կատարվեց Խավարման կարգը՝ որպես խորհրդանիշ Հիսուսի չարչարանքների և խաչելության:

Ավագ Ուրբաթը Տիրոջ խաչելության և թաղման խորհուրդն ունի: Կեսօրին Մայր Տաճարում կատարվեց խաչելության կարգ, իսկ երեկոյան, Ամենայն Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց Թաղման կարգ: Այս արարողության ընթացքում Հիսուս Քրիստոսի խորհրդանշական գերեզմանը, զարդարված ծաղիկներով, դուրս բերվեց Մայր Տաճարից և հանդիսավոր թափորով պտտեցվեց Մայր Տաճարի շուրջը:

Ավագ Շաբաթը խորհրդանշում է Դժոխքի ավերումը:

Երեկոյան Մայր Տաճարում մատուցվեց Ճրագալույցի Ս. Պատարագ, որի ընթացքում տրվեց Քրիստոսի հարության ավետիսը և ավարտվեց Մեծ պահքը: Պատարագիչն էր Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը:

Հավարտ Ս. Պատարագի եկեղեցական թափորը շարժվեց Վեհարան, ուր Նորին Սրբության հանդիսապետությամբ կատարվեց Տնօրհնեքի արարողություն:

Կիրակի, ապրիլի 11-ին, Տիսուս Քրիստոսի Հարության տոնն էր:

Առավոտյան Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեծահանդես թափորի ուղեկցությամբ ուղղվեց դեպի Մայր Տաճար՝ մատուցելու Ս. Պատարագ և Հայրապետական իր պատգամը հղելու համայն հայությանը (տե՛ս էջ 3):

Պատարագի սրբազան արարողությանը ներկա էին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Ազգային ժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Ազգային ժողովի պատգամավորներ, նախարարներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագետներ, Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, արվեստի և մշակույթի գործիչներ, բազմաթիվ հավատացյալներ:

Սուրբ Պատարագի ավարտին Վեհարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Վեհափառ Հայրապետն ամենքին վերընտրին ուղղեց Քրիստոսի Հրաշափառ Հարության ավետիսը:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի

ՀԵՂԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՑ ՀԵՏՈ.
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԱՓՈՐԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԺՈՂՈՎՐԴՈՎ

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՐ ՊԱՏԳԱՄՆ Է ՀՂՈՒՄ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ